

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի
ղեկավար **Հր. Գևորգյանի մոտ 07.08.2014թ.** տեղի ունեցած **ՀՀ Արագածոտնի
մարզպետին առընթեր երիտասարդական խորհրդի** նիստի

Մասնակցում էին՝

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի Մարզպետին առընթեր երիտասարդական
խորհրդի անդամները:

Լսեցին՝

Խորհրդի գործունեություն և երիտասարդների շրջանում բազմակարծության և հավասար
հնարավորությունների ապահովման, մարզում երիտասարդական քաղաքականության
արդյունավետության բարձրացման, երիտասարդության հարցերին առնչվող պետական,
մարզային և համայնքային մարմինների համագործակցության ապահովման վերաբերյալ
հարցեր: Բարձրացվեցին նաև համայնքներում արհեստագործական խմբերի ստեղծման,
սոցիալական, տնտեսական, մշակութային, մարզական բնագավառներին վերաբերող մի շարք
հարցեր:

Որոշեցին՝

Հստակ ծրագրեր ներկայացնել խորհրդի նախագահ, մարզպետ Սարգիս Սահակյանին
խորհրդի անդամների կողմից բարձրացված խնդիրների, առաջարկությունների,
նախաձեռնությունների վերաբերյալ: Ծրագրերը պետք է առնչվեն համայնքների
երիտասարդությանը վերաբերվող բոլոր կողմերին՝ սոցիալ-տնտեսական, կրթական,
մշակութային, մարզական եւ այլն:

Խորհուրդը պայմանավորվեց անհրաժեշտության դեպքում ավելի հաճախակի հանդիպել,
միասին քննարկել գործնական քայլերը եւ դրանց հետագա ընթացքը:



Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ